ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԹՈՒՄԱՆՅԱՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԼՈՐՈՒՏ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լորուտ գյուղը հիմնադրվել է 1843 թվականին, առաջնաբնակները եկել են նախկին Նոյեմբերյանի շրջանի ներկայիս Բերդավան, այն ժամանակվա Ղալաչա գյուղից, մի քանի ընտանիքներ եկել են նախկին Ալավերդու շրջանի գյուղերից:

1225 թվականին Խորեզմի սուլթան Ջալալէդդինը ասպատակում է նաև Տավուշը, որտեղ էլ որ գտնվում էր Խորնաշատ վանքը: Դրանից հետո կրթական գործունեությունն արդե կասեցվում է: Հովհաննես Վանականը իր աշակերտների հետ տեղափոխվում է Լորուտ գյուղի մոտ փորել տված քարայրը և շարունակում է ուսուցանել: Սակայն 1236 թվականին մոնղոլ Մոլար Նուինի հրոսակները հասնում են մինչև Տավուշ, գրավում այն և կողոպտում քարայր-դպրոցն ու այնտեղ ապաստանած ժողովրդին: Նրանք գերեվարում են ուսուցչապետ Հովհաննես Վանականին և նրա աշակերտներից մի քանիսին, այդ թվում և Կիրակոս Գանձակեցուն: Մի քանի ամիս անց Հովհաննեսը Վանականը փրկագնով ազատվում է, իսկ Գանձակեցին անմիջապես դիմում է փախուստի: Գյուղի մոտ կան միջնադարյան պատմա-ճարտարապետական հուշարձաններ՝ խաչքարեր, գյուղատեղի «Մոտկոր», Մարց գետի վրա կան միջնադարյան երկու կամուրջներ: Գյուղում է գտնվում 1898 թվականին կառուցված «Սուրբ Սարգիս» եկեղեցին:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Գյուղը գտնվում է Մարց գետի աջափնյա լանջին, Ալավերդի քաղաքից մոտ 20 կմ հարավ-արևելք, բլուրների վրա անտառապատ գեղատեսիլ վայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ: Հեռավորությունը մարզկենտրոնից 57 կմ, մայրաքաղաքից 177 կմ է, Ալավերդի քաղաքից՝ 38 կմ, համայնքի կենտրոնից՝ 21 կմ:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կլիման համեմատաբարբ մեղմ է:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Լորուտ
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	21կմ
2.2) մայրաքաղաքից (կմ)	177կմ
2.3) մարզկենտրոնից (կմ)	57կմ
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	80կմ
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	38կմ

2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	21կմ
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	27կմ
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1500մ
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	7652.38քմ
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Շամուտ,Մարց,Ահնիձո,Նոյեմբերան
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	-
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո , 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	805
2. Գրանցված ծնունդների քանակը	7
2.Մահացության դեպքերի քանակը	5
3.Ամուսնությունների քանակը	2
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	149
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	1
7. Կենսաթոշակառուների քանակը	72
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	14

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0

8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը ($մ^2$)	38640
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	229

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	4957,49
2. Բնակավայրերի հողեր (հա)	119,84
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	6,32
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	4,48
5. Հատուկ նշանակության	7,11
6. Հատուկ պահպանվող տարածքների	2543,64
7. Անտառային	1338.1
8. Ջրային	13,5
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1994
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	165
11. Խոզերի գլուխաքանակը	178
12. Գյուղատնտեսական տեխնիկա	0
12.1 տրակտորներ (քանակը)	15
12.2 կոմբայններ (քանակը)	0
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	149

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	1
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	20կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	0

6.2 Էքսկավատորների քանակը	0
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	3
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	3
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	1
1.1 համայնքային ծառայողներ	1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	1

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
Դեգրադացված հողեր:	Հողերի դեգրադացման դեմ պայքար, պարարտացում, մաքրման աշխատանքներ, մշակվող տարածքների ավելացում
Չկա միջհամայնքային կամ միջ բնակավայրային տրասպորտային երթուղի:	Տրանսպորտային երթուղու կազմակերպում